

Մարտի 4-ին Հայոց թագաւորն հրաժեշտ առնելով Աւիննոնի պապէն՝ Մոնպելլիէի վրայով անցաւ եւ մտաւ Սպանիա, Արագոնի եւ Կատալոնիայի թագաւորներուն յայանելու համար իր երախտագիտութիւնն ու շնորհակալիքը (1) :



Կերսնոց ոսկիի փոխարէն : Դասաւորին կիրակին այս վարդը տուեցաւ սեր պապին առ սեր Թագաւորն Հայոց . . . » : *Բանասէր* հանդեսիս մեջ (Ա. տարի, եր. 131) հայերէնագէտ Ա. Կարրիէր՝ իր այս մասին գրած յօդուածը ա՛յսպէս կը վերջացնէ .

«Արդ՝ ի՞նչ եղաւ Հայոց վերջին թագաւորին ընծայուած այս ոսկեղէն վարդն : Արդեօք բոլորովին անհետացա՞ւ : Կրնա՞նք յուսալ քե բախտոցի մը մեջէն եւ կամ անծանօթ հաւաքածոյի մը երեսան պիտի ելնէ օր մը : Աւա՛ղ, բաղդը մեր ձեռնէն խլած է զայն, եւ վերսին տեսնելու յոյս ալ չէ ձգած : Անոր վրայ երբեք չի խօսուիր այն բոլոր յիշատակարանաց մեջ՝ որոնք գրուած են Լեւոնի Ավիննոնէն անցնելէն յետոյ : Իւր կտակն ալ կը լռէ այս մասին : «Պատուական վարդն» հետեւած պիտի ըլլայ իր բազմաթիւ փոյրերուն շաղիկն, եւ, դրամական ներդրեան օր մը, հնչուն կամ ընթացիկ դրամի վերածուած պիտի ըլլայ դժբաղդաբար : » (Անդ, եր. 140) :

(1) Դարդել (եր. 189) կրտս, քե Լեւոն «Մայիսի» 4-ին մեկնեցաւ Աւիննոնէ . բայց վերը յիշուած Մոնպելլիէի ժամանակագրութիւնը *Petit Thalamus* (եր. 406) հակառակը կը հաստատէ, Լեւոնի Մոնպելլիէ ժամանումն արձանագրելով *Wars* ամսի 7-ին եւ անկէ մեկնումը՝ նոյն ամսի 29-ին, Երկուշաբթի օրը. «Item, aquel an (1382), lo rey dErminia lo qual avia combatut am lo Sudan de Babilonia et era estat pres e sa molher e sos enfans e tot son realme, e pueys sa molher e sos enfans eron mort en la preysso, et el era estat delievrat per lo Soldan a la requesta del rey dAragon, e daqui sen era vengut en Rodas e puoys en Avinhon, lo VII jorn de mars (1383) venc a Montpellier, e puoys lo dilus martin que era XX jorns del dich mes, partit de Montpellier e sen anet en Cathaloncha en ver lo dich rey dAragon. »